§ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ¦
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ §ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ,
«ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԱՐԶՈՒՄՆԵՐ (ԲՌՆՑՔԱՄԱՐՏ)¦
ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ
2025-2026 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ **ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ** ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ
ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐՄԵՐԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

## ԲՌՆՑՔԱՄԱՐՏԻ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՍՏՈՒԳՈՒՄ և ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ 20 ՄԻԱՎՈՐ

Վարժությունները կատարվում են մարզագործիքների վրա /պարկերի, պատի բարձերի վրա/, յուրաքանչյուր սխալի դեպքում ընդհանուր միվորների քանակից հանվում է մեկ միավոր:

**Վարժությունները և դրանց կատարման ժամանակ թույլտված հնարավոր սխալները**

**1. Մարտական կեցվածքների ստուգում և գնահատում**

| ՀՆԱՐԱՎՈՐ ՍԽԱԼՆԵՐԸ | Հանված միավորներ |
|---|---|
| ա/ ձախակողմյան մարտական կեցվածքի սխալ դիրքի ընդունում | 1 |
| բ/ աջակողմյան մարտական կեցվածքի սխալ դիրքի ընդունում | 1 |
| գ/ ճակատային մարտական կեցվածքի սխալ դիրքի ընդունում | 1 |

**2. Դասական հարվածների ստուգում և գնահատում**

| ՀՆԱՐԱՎՈՐ ՍԽԱԼՆԵՐԸ | Հանված միավորներ |
|---|---|
| ա/ հարվածների իրականացման մեխանիզմի ոչ ճիշտ կատարում | 1 |
| բ/ հարվածների ժամանակ բռունցքների և արմունկների ոչ ճիշտ դիրքը | 1 |
| գ/ ուղիղ հարվածների ժամանակ մարմնի դիրքի ոչ ճիշտ պահպանում | 1 |
| դ/ կողքի հարվածների ժամանակ մարմնի դիրքի ոչ ճիշտ պահպանում | 1 |
| ե/ ներքևից հարվածների ժամանակ մարմնի դիրքի ոչ ճիշտ պահպանում | 1 |
| զ/ կրկնակի հարվածների ոչ ճիշտ կատարում | 1 |
| է/ երկուական հարվածների ոչ ճիշտ կատարում | 1 |
| ը/ հակահարվածների տեսակների ոչ ճիշտ կատարում | 1 |

**3. Պաշտպանական հնարքների ստուգում և գնահատում**

| ՀՆԱՐԱՎՈՐ ՍԽԱԼՆԵՐԸ | Հանված միավորներ |
|---|---|
| ա/ պաշտպանության ժամանակ ոչ ճիշտ կեցվածքի ընդունում | 1 |
| բ/թեքումներ, սուզումներ կատարելու ընթացքում ձեռքերի ոչ ճիշտ դիրքը | 1 |
| գ/ թեքումներ, սուզումներ կատարելու ընթացքում իրանի ոչ ճիշտ դիրքը | 1 |
| դ/ թեքումներ, սուզումներ կատարելու ընթացքում ոտքերի ոչ ճիշտ դիրքը | 1 |
| ե/ ձեռքերի միջոցով պաշտպանության տեսակների /հենում, վանում, խուլ պաշտպանություն/ ոչ ճիշտ կատարում | 1 |

| | |
|---|---|
| զ/ տեղաշարժերի միջոցով պաշտպանության տեսակների /սայթ-սթեփ, շրջանցումներ, արտաքայլեր/ ոչ ճիշտ կատարում | 1 |
| է/ պաշտպանության ժամանակ գլխով վտանգավոր շարժումներ կատարելը | 1 |

**4. Տեղաշարժերի տեխնիկայի ստուգում և գնահատում**

| ՀՆԱՐԱՎՈՐ ՍԽԱԼՆԵՐԸ | **Հանված միավորներ** |
|---|---|
| ա/ բռնցքամարտիկի քայլերի տեսակների /սովորական, կողադիր, արտաքայլեր/ ոչ ճիշտ կատարում | 1 |
| բ/ բռնցքամարտիկի ցատկերի տեսակների /մաքոք, փոքրոստյուններ/ ոչ ճիշտ կատարում | 1 |

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Վերջնական գնահատականը որոշվում է չորս վարժություններից վաստակած մավորների գումարով:

Ընդունելության քննության նորմերը և գնահատման չափորոշիչները կազմվել են հիմք ընդունելով սիրողական բռնցքամարտի միջազգային ասոցիացիայի (AIBA) և ՀՀ բռնցքամարտի ֆեդերացիայի կանոնակարգը և օգտվելով հետևյալ գրականությունից (Դ. Ս. Դավթյան, Ա .Լ. Անտոնյան, «Բռնցքամարտ» ուսումնական ձեռնարկ) Երևան 2002: